

շատակարանները կան նաև «խմբագրի» մէջ, և Լ. Զարբանալեանը կարող էր միայն ենթագրութեամբ ասել. «Հաւանական կերեայ թէ ասոր ընդարձակ մեկնութիւնն է զոր թարգմանել տուաւ Վկայասէր»:

Գտնուած է մի յիշատակարան, որի մէջ ասուած է թէ Գէորգ վարդապետ Լամբրոնացին կամ Սկեւոացին, «առնէր և համառօտ մեկնութիւն Գործոց Առաքելոցն ի խնդրոյ արքայեղբօրն տեառն Յովհաննու»:^ա ուրեմն խմբագրութիւնը կատարուել է Յովհաննէսի հրամանաւ, որի ինքնագիր օրինակը ամբողջ դարեր անկորուստ պահուելով, այսօր Մայր աթոռիս մատենադարանի ընտիր զարգերիցն է:

Թէ որ թուին է գրուել ձեռագիրը, զրժ-բախտաբար հաստատ ասել չենք կարող, որովհետեւ բազմաթիւ յիշատակարանների մէջ միայն գրողի և գրել տողի անուններն են, թիւը չկայ. բայց զրժուար չէ մօտաւոր հաշուով այդ թիւը գտնել. Յովհաննէսը եպիսկոպոս է ձեռնադրուել 1259 թ., մօտ քսան տարի անց, նա յիշուում է «արքեպիսկոպոս Գռներոյ»:^բ Եթէ այդ տարիների միջինը վերցնենք, իսկական թուից շատ քիչ շեղուած կը լինենք. հետեւապէս 1265-ից մինչև 1272:

Պարզ երևում է, որ Յովհաննէս եպիսկոպոսը Վկայասէրի մեկնութեան թարգմանութիւնից մի օրինակ իւր համար արտագրել է և ապա նրա նմա-

ա. Տեւ Զարբ. հշ 582 և 700:

բ. Տեւ՝ Յ. Տաշեան. Յուց. Հայ. 2եռ. Մաս. Միի-րար. ի Վիիննա. հշ 634 և Այիշան Սիսուան. 144—147: